

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

2014-2015 ուսումնական տարի

*Մաթեմատիկոսի ընտրությամբ գործունեություն*

6-9-րդ դասարան

1. *Ուսումնական միջավայր.*

- ուսումնական կաբինետ՝ հիմնական համակարգիչ՝ միացված էլեկտրոնային գրատախտակին, լոկալ ցանց, պրոեկտոր, էլեկտրոնային գրիչներ, ուսուցչի և սովորողների անհատական նոութբուքեր, document camera, smart response, ուսումնական նյութերի, ծրագրերի սկավառակներ, հարմարավետ անհատական սեղան-աթոռ
- համացանցում ուսուցման միջավայրը՝ մաթեմատիկական կայքեր, ուսուցչի, սովորողների բլոգներ, էլեկտրոնային օրագրեր, կրթահամալիրի, գրադարանի կայք
- ուսուցչին անհրաժեշտ գործիքներ և նյութեր՝ նոութբուք կամ նեթբուք, էլեկտրոնային օրագիր, էլեկտրոնային մատյան, էլեկտրոնային գրիչ, անձնական բլոգ, կայք, էլեկտրոնային թղթապանակ, համակարգչային ծրագրերի սկավառակներ
- սովորողին անհրաժեշտ գործիքներ և նյութեր՝ նոութբուք կամ նեթբուք, էլեկտրոնային ռեսուրսներ, անձնական բլոգ, կայք, էլեկտրոնային թղթապանակ, ֆոտոսխցիկ, բջջային հեռախոս
- ուսումնական նյութեր՝ օլիմպիական խնդիրների ժողովածու, էլեկտրոնային մաթեմատիկական ձեռնարկներ, շտեմարաններ, հետաքրքրաշարժ խնդրագրքեր, արտասահմանյան օնլայն գրքեր:
- Կայքեր, բովանդակություն

[Ընտրությամբ գործունեություն](#)

[Պատանի մաթեմատիկոս](#)

[Դպրոցականների օլիմպիադա](#)

[Մաթեմատիկայի կրթական կայք](#)

[Օժտված երեխաների մրցույթ](#)

*Ձևավորվող կարողություններ, հմտություններ, գիտելիք*

Մաթեմատիկայի ուսուցման նպատակներն են սովորողի մոտ ձևավորել և զարգացնել.

- Օլիմպիական դժվարավուն խնդիրները հասկանալու, խնդիրների լուծման նոր եղանակներ մշակելու կարողություն
- Նոր խնդիրներ հորինելու կարողություն
- տրամաբանական, լեզվական մտածողություն
- դիտարկելու, կռահելու, եզրակացություններ անելու կարողություններ

- որոշումների կայացնելու, սեփական և ուրիշների դատողություններին քննադատաբար վերաբերվելու, խմբում աշխատելու կարողություններ
- սերմանել վստահություն սեփական ուժերի նկատմամբ
- դաստիարակել հարգանք մշակութային արժեքների, դրանք ստեղծողների նկատմամբ:

*Մեդիա (գործիքներ, համակարգչային ծրագրեր, կրթահամալիրի կայք) հմտություններ*

«Միթար Սեբաստացի» կրթահամալիրի Միջին դպրոցի մաթեմատիկոսի ընտրությամբ գործունեության խմբի սովորողը պետք է ունենա բլոգ կամ կայք և ազատորեն տիրապետի բլոգավարման հմտություններին, ունենա անհատական նութրուքով առաջադրանքներ կատարելու համար տիրապետի Microsoft Power Point, Microsoft Word, Microsoft Excel, Advanced Crapther, Radish Works Cosmas Creator, GeoGebra, Smart Notebook, Microsoft Mathematics 5, Mathcad 2000 Professional և այլն:

Ծրագրային նյութի յուրացման կազմակերպումը

- *Ընտրությամբ գործունեության պարապմունքների կազմակերպման մեթոդական նկարագրություն*

Պարապմունքները կազմակերպվում են ըստ ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակի և կրթահամալիրյան օրացույցի: Խմբում կարող են ընդգրկվել մինչև 15 սովորող: Դասի ընթացքում բացատրվում և լուծվում են վերը նշված կայքերի օլիմպիական, տրամաբանական խնդիրները: Սովորողները կատարում են տվյալների փոփոխություն՝ ստանալով նոր խնդիրներ, առաջարկում լուծման այլ եղանակներ և դրանք հրապարակում սեփական բլոգում:

- *Իրականացվող սովորողի ընտրությամբ ուսումնական նախագծերը, այդ թվում՝ կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված նախագծեր.*

Միջին դպրոցի, կրտսեր դպրոցների մյուս սովորողների համար օլիմպիականների, մրցույթների, խաղ-վիկտորինաների կազմակերպում:

Ստուգման և կիսամյակային, տարեկան գնահատման կարգը.

Կիսամյակի և տարվա վերջում սովորողը ստանում է ստուգված կամ չստուգված՝ հաշվի առնելով նրա մասնակցությունը պարապմունքներին, կատարած աշխատանքները: